Հաշվետվություն

Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի

2021թ. սեպտեմբեր -2022թ. հուլիս

Հաշվետու ժամանակահատվածում ԿԲԴՎ բաժնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

ա. Փաստաթղթերի մշակում և վերամշակում.

1. Մշակվել և հաստատման է ներկայացվել հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգը («Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգ» հաստատված 30.11.2021 գիտական խորհրդի 55 նիստում)
2. Մշակվել և հաստատման է ներկայացվել փաստաթղթաշրջանառության կարգը («Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի փաստաթղթաշրջանառության կարգ» հաստատված 30.11.2021 գիտական խորհրդի 55 նիստում)
3. ՄԿՈԱ բաժնի հետ համատեղ վերանայվել և հաստատման է ներկայացվել «ԵՊՀ ԻՄ Գիտական խորհրդին կից Որակի կառավարման մշտական հանձնաժողովի գործունեության» կանոնակարգը (հաստատված 30.11.2021թ. գիտական խորհրդի 55 նիստում)
4. ՄԿՈԱ բաժնի հետ համատեղ վերանայվել և հաստատման է ներկայացվել «ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումներում գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի լիազոր-ներկայացուցչի գործունեության» կանոնակարգը (հաստատված 30.11.2021թ. գիտական խորհրդի 55 նիստում)
5. Մշակվել և հաստատման է ներկայացվել կրթական ծրագրերի ղեկավարների գործունեության կարգը («Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի ղեկավարների գործունեության կարգ» հաստատված 27.01.2022 գիտական խորհրդի 57 նիստում)
6. Մշակվել և կրթական ծրագրերի ղեկավարներին է տրամադրվել ծրագրերի ղեկավարների աշխատանքային պլանների օրինակելի ձևը:

7. Մշակվել և կրթական ծրագրերի ղեկավարներին է տրամադրվել կրթական ծրագրերը վերանայող աշխատանքային խմբերի պլանների օրինակելի ձևը:

8. ՈՒՄՎ-ի հետ համատեղ մշակվել լաբորանտների աշխատանքային պլանի օրինակելի ձևը:

9. Պատրաստվել և փորձաքննության է ներկայացվել «Դեկորատիվ-կիրառական արվեստ» բակալավրի կրթական ծրագիրը

10. Մշակվել և հաստատման է ներկայացվել ուսանողների ինքնուրույն աշխատանքերի կազմակերպման կարգը («Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման կարգ» հաստատված 30.04.2022 գիտական խորհրդի 59 նիստում)

11. ՄԿՈԱ բաժնի հետ համատեղ վերանայվել և հաստատման է ներկայացվել ԵՊՀ ԻՄ-ի ներքին աուդիտ անցկացման կարգը (ԵՊՀ ԻՄ Գիտական խորհուրդ, 30.04.2022)

12. Մշակվել և հաստատման է ներկայացվել վարչական, ինժեներատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման կարգը («Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի վարչական, ինժեներատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման կարգ» հաստատված 30.04.2022 գիտական խորհրդի 59 նիստում):

13. Մշակվել և հաստատման է ներկայացվել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջները (հաստատված 16.06.2022թ. գիտական խորհրդի 60 նիստում)

14. Մշակվել և հաստատման է ներկայացվել «ԵՊՀ հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կառավարման գործընթացում ուսանողների և դասախոսների մասնակցությունը երաշխավորող քաղաքականության» նախագիծը (հաստատված 16.06.2022թ. գիտական խորհրդի 60 նիստում):

15. Վերանայվել և հաստատման է ներկայացվել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենության կանոնակարգը (հաստատված 02.07.2022թ. գիտական խորհրդի 61 նիստում):

16. Մշակվել և քննարկման փուլում է ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների ընդհանրական կոմպետենցիաների պարտադիր կազմի նախագիծը

17. Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. մարտի 4-ի N 367 Ա/2 հրամանի ԿԲԴՎ բաժնի կողմից վերամշակվել է հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման ծրագրի մոդուլը: Ըստ նոր չափորոշչի և ծրագրի բաժնի կողմից վերամշակվել են 7 դասընթացների /«Հանրակրթական բնագավառի օրենսդրություն», «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում» /ըստ ՏՀՏ տիրապետման 3 մակարդակների/, «Տարիքային հոգեբանություն», «Դիրքորոշում և արժեք», «Համընդհանուր ներառում», «Գնահատում»,«Հետազոտական աշխատանքներ կատարելու սկզբունքներ» /և 17 մասնագիտական առարկաների/ Հայոց լեզու և գրականություն, Պատմություն, Հասարակագիտություն, Դասվար, Տեխնոլոգիա, Աշխարհագրություն, Ինֆորմատիկա,ՆԶՊ, մաթեմատիկա, Ֆիզիկա, Կենսաբանություն, Քիմիա, Ռուսաց լեզու, Ֆրանսերեն, Անգլերեն, Ֆիզիկական կուլտուրա, Կերպարվեստ/ վերապատրաստման դասընթացների թեմատիկ պլանները՝ իրենց վերջնարդյունքներով, դասավանդման մեթոդներով և գնահատման ձևերով: ԿԳՄՍ նախարարություն ներկայացված բաժնի մոդուլը երաշխավորվել և հաստատվել է:(358 էջ)

18. ԵՊՀ ԻՄ 2022-2026 զարգացման ռազմավարական ծրագիրը: ԵՊՀ ԻՄ 2022-26 զարգացման ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի շրջանակում առաջին՝ «Բարձրորակ կրթություն» նպատակի պատրաստման աշխատանքների համակարգում, մյուս երկու խնդիրների ձևակերպման և կազմման աշխատանքներին մասնակցություն:

19. ԵՊՀ ԻՄ 2022-26 զարգացման ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի շրջանակում առաջին՝ «Բարձրորակ կրթություն» նպատակի գործողությունների պլան-ժամանակացույցի կազում:

20. ԵՊՀ ԻՄ 2022-2026 զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա ԿԲԴՎ բաժնի 2022-2026 զարգացման ռազմավարական ծրագրի և 2022-2023 թթ. պլանների կազմում:

բ. ***Վերապատրաստումներ***

1. 2021թ. սեպտեմբերի 7-ին և 10-ին իրականացվել է **«Հետազոտական աշխատանքների մեթոդաբանություն»** թեմայով **վերապատրաստման դասընթացը /առցանց և առկա/,** որին մասնակցել է ԵՊՀ ԻՄ-ի **28** դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 19 դասախոս, Տնտեսագիտության՝ 5 դասախոս, Բնական գիտությունների՝ 3 դասախոս, Կիրառական արվեստի՝ 1 դասախոս): Դասընթացի ավարտին կազմակերպված ստուգարքը հանձնել են 18 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 10 դասախոս, Տնտեսագիտության՝ 4 դասախոս, Բնական գիտությունների՝ 3 դասախոս, Կիրառական արվեստի՝ 1 դասախոս):
2. 2021թ. սեպտեմբերի 9-ին, 10-ին և 13-ին ԵՊՀ-ում կազմակերպվել է **«Առցանց դասավանդման հմտությունների զարգացում»** թեմայով 10 ակադեմիական ժամ տևողությամբ վերապատրաստման առցանց դասընթացը, որին մասնակցել է 4 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 2 դասախոս, Տնտեսագիտության՝ 2 դասախոս):
3. 2021թ. սեպտեմբերի 28-ից նոյեմբերի 2-ը առցանց եղանակով կազմակերպվել է «Ուսուցման նորարարական մեթոդներ» մոդուլում ներառված **«Ակտիվ ուսուցում «շրջված լսարանում»** 10 ակադեմիական ժամ տևողությամբ կամընտրական դասընթացը, որին մասնակցել է մասնաճյուղի 2 դասախոս (Տնտեսագիտության ֆակուլտետ՝ 1 դասախոս, Բնական գիտությունների ֆակուլտետ՝ 1 դասախոս):
4. 2021թ. սեպտեմբերի 28-ից նոյեմբերի 2-ը ԵՊՀ-ում կազմակերպվել է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «Ուսուցման նորարարական մեթոդներ» մոդուլի **«Համագործակցային ակտիվ ուսուցում»** 10 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացը, որին մասնակցել է մասնաճյուղի 5 աշխատակից (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 2 դասախոս, Բնական գիտությունների՝ 1 դասախոս և 2 վարչական աշխատակից):
5. 2021թ. սեպտեմբերի 30-ից նոյեմբերի 4-ը ԵՊՀ-ում կազմակերպվել է Կրեդիտային համակարգով ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման

բարձրացման կրթագիտական ծրագրի «Ուսուցման նորարարական մեթոդներ» մոդուլի «**Տեսանյութերը որպես դասավանդման գործիք»** 12 ակադեմիական ժամ տևողությամբ վերապատրաստման առցանց դասընթացը, որին մասնակցել է ԵՊՀ ԻՄ մեկ աշխատակից:

6. 2021թ. հոկտեմբերի 2-ին և հոկտեմբերի 9-ին իրականացվել է **«Աշխատանքային կամ պաշտոնական գործավարության տեքստերի պատրաստման հմտությունները»** թեմայով 4 ակադեմիական ժամ տևողությամբ վերապատրաստման դասընթացը, որին մասնակցել է 57 ԵՊՀ ԻՄ աշխատակիցներ (Ուսումնաօժանդակ անձնակազմ՝ 13, վարչական անձնակազմ՝ 44):
7. 2021թ. հոկտեմբերի 4-ից նոյեմբերի 1-ը ԵՊՀ ԻՄ 6 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 5 դասախոս, Տնտեսագիտության՝ 1 դասախոս) մասնակցել են Կրեդիտային համակարգով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «Ընդհանուր կամընտրական դասընթացներ» մոդուլի «**Միջանձնային հաղորդակցումը կրթական գործընթացում**» 10 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացին:
8. 2021թ. հոկտեմբերի 6-ից նոյեմբերի 3-ը ԵՊՀ ԻՄ 3 աշխատակից (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 1 դասախոս, Տնտեսագիտության՝ 1 դասախոս,1 աշխատակից) մասնակցել են Կրեդիտային համակարգով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «**Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն**» մոդուլի «**Թվային գործիքների ուսուցում**» 10 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացին:
9. 2021թ. հոկտեմբերի 6-ից նոյեմբերի 10-ը ԵՊՀ ԻՄ 8 աշխատակից (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 4 դասախոս, Տնտեսագիտության՝ 2 դասախոս,2 աշխատակից) մասնակցել են Կրեդիտային համակարգով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «Ուսուցման նորարարական մեթոդներ» մոդուլի **«Համակցված դասավանդում և ուսուցում լսարանում»** 10 ակադեմիական ժամ տևողությամբ կամընտրական դասընթացին:

10. 2021թ. հոկտեմբերի 12-ից նոյեմբերի 9-ը ԵՊՀ ԻՄ 8 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 5 դասախոս, Տնտեսագիտության՝ 3 դասախոս) մասնակցել են Կրեդիտային համակարգով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն» մոդուլի **«Մասնագիտական սթրեսների կանխարգելում և կառավարում» 10** ակադեմիական ժամ տևողությամբ կամընտրական դասընթացին:
11. 2021թ. հոկտեմբերի 14-ին կազմակերպվել է «**Մանկավարժական տարատեսակ պրակտիկաների կազմակերպման եղանակները»** թեմայով 4 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացը, որին մասնակցել է **10** դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 8 դասախոս, Տնտեսագիտության՝ 2 դասախոս):
12. 2021թ. դեկտեմբերի 9-ին կազմակերպվել է **«Կրթության բովանդակության հիմնախնդիրը»** դասընթացը, որին մասնակցել է 15 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ՝ 9 դասախոս, Տնտեսագիտության ֆակուլտետ՝ 2 դասախոս, Բնական գիտությունների ֆակուլտետ՝ 4 դասախոս)
13. 2022թ. հունվարի 21-ին կազմակերպվել է **«Դասախոսի աշխատանքը ուսանողակենտրոն ուսուցման տեսանկյունից»** 4 ակադեմիական ժամ տևողությամբ առցանց դասընթացը, որին մասնակցել է 28 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ՝ 16 դասախոս, Տնտեսագիտության ֆակուլտետ՝ 6 դասախոս, Բնական գիտությունների ֆակուլտետ՝ 5 դասախոս, Կիրառական արվեստի ֆակուլտետ՝ 1 դասախոս)
14. 2022թ. փետրվարի 22-ին կազմակերպվել է **«Աշխատանքային իրավահարաբերություններ, առկա խնդիրներ, աշխատանքային օրենսգրքի փոփոխություններ»** 4 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացը, որին մասնակցել է ԵՊՀ ԻՄ-ի 13 աշխատակից և 3 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ՝ 2 դասախոս, Տնտեսագիտության ֆակուլտետ՝ 1 դասախոս, ԱԿԻԱ՝ 5 աշխատակից, Հաշվապահություն՝ 5, ԿԲԴՎ՝ 3):

15. 2022թ. ապրիլի 19-ից մայիսի 26-ը կազմակերպվել է **«Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում»** 7 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացը՝ 2 խմբերով, որին մասնակցել է 31 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ՝ 18 դասախոս, Տնտեսագիտության ֆակուլտետ՝ 6 դասախոս, Բնական գիտությունների ֆակուլտետ՝ 6 դասախոս, Կիրառական արվեստի ֆակուլտետ՝ 1 դասախոս):
16. 2022թ. մայիսի 7-ին կազմակերպվել է **«Հետազոտական աշխատանքների պլանավորում, իրականացում, ներկայացում»** 2 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացը, որին մասնակցել է 18 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ՝ 9 դասախոս, Տնտեսագիտության ֆակուլտետ՝ 4 դասախոս, Բնական գիտությունների ֆակուլտետ՝ 4 դասախոս, Կիրառական արվեստի ֆակուլտետ՝ 1 դասախոս):
17. 2022թ. մայիսի 13-ին կազմակերպվել է **«Կրթության հոգեբանական հիմքերը»** 2 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացը, որին մասնակցել է 17 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 7 դասախոս, Տնտեսագիտության ֆակուլտետ՝ 3 դասախոս, Բնական գիտությունների ֆակուլտետ՝ 4 դասախոս, Կիրառական արվեստի ֆակուլտետ՝ 3 դասախոս):
18. 2022թ. մայիսի 14-ին կազմակերպվել է **«Իրավիճակը Մերձավոր Արևելքում և անդրադարձը հայ համայնքի վրա»** 2 ակադեմիական ժամ տևողությամբ դաս-քննարկումը, որին մասնակցել է 8 աշխատակից և շուրջ 20 ուսանողներ:

21. 2022թ. մայիսի 18-ին կազմակերպվել է **«Հայերի Լիր արքան»** 2 ակադեմիական ժամ տևողությամբ դաս-քննարկումը, որին մասնակցել են մեկ տասնյակից ավելի աշխատակից և ուսանող:
22. 2022թ. մայիսի 20-ին կազմակերպվել է **«Աշխարհակարգը 19-21-րդ դարերում»** 2 ակադեմիական ժամ տևողությամբ դաս-քննարկումը, որին մասնակցել են շուրջ երկու տասնյակ դասախոսներ և ուսանողներ:
23. 2022թ. մայիսի 22-ից մինչև հունիսի 6-ը կազմակերպվել է **«Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում»** 7 ակադեմիական ժամ տևողությամբ առցանց դասընթացը,

որին մասնակցել է 21 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 15 դասախոս, Տնտեսագիտության ֆակուլտետ՝ 3 դասախոս, Բնական գիտությունների ֆակուլտետ՝ 3 դասախոս):

24. 2022թ. մայիսի 25-ին կազմակերպվել է առցանց դասընթաց **«Moodle էլեկտրոնային ուսուցման համակարգը բուհերում»** թեմայով, որին մասնակցել են երկու տասնյակից ավելի դասախոս և աշխատակից:
25. 2022թ. հունիսի 14-ին և 16-ին կազմակերպվել է առցանց դասընթաց **«Գործաբանական հաղորդակցություն» թեմայով,** որին մասնակցել են 15 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ՝ 13 դասախոս, Տնտեսագիտության ֆակուլտետ՝ 1 դասախոս, Բնական գիտությունների ֆակուլտետ՝ 1 դասախոս):
26. 2022թ. ՈՒՄՎ-ի հետ համատեղ կազմակերպվել է վերապատրաստում **«ԵՊՀ ԻՄ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը»** թեմայով, որին մասնակցել են ԵՊՀ ԻՄ ֆակուլտետի դեկանները, ամբիոնի վարիչները, կրթական ծրագրերի ղեկավարները, դեկանատի գործավարները և ամբիոնի լաբորանտները՝ թվով 27 մարդ:
27. 2022թ. հուլիսի 1-16-ը կազմակերպվել է **«Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում»** 7 ակադեմիական ժամ տևողությամբ առցանց դասընթացը,

Նշեմ, որ այս տարի առաջին անգամ ԵՊՀ ԻՄ դասախոսների վերապատրաստման տվյալները հաշվառվել են ՀԾ Զեռնարկություն համակարգի Կադրեր ենթահամարգում և տարեվերջին ուղարկվել են ամբիոններին և դասախոսներին:

գ.ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ԿԲԴՎ բաժինը համակարգել պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները: ԵՊՀ ԻՄ-ում նոյեմբերի 1-ից 30-ը ըստ հաստատված դասացուցակի իրականացվել է վերապատրաստման դասընթացները՝ հետևյալ մոդուլներով.

1. Հանրակրթության բնագավառի օրենսդրություն-9 ժամ
2. ՏՀՏ-20 ժամ
3. Հոգեբանություն-8 ժամ,
4. Ներառական կրթություն-9 ժամ
5. Ընդհանուր մանկավարժական գիտելիքներ-2 ժամ
6. Արժեքների և վերաբերմունքի ձևավորումը առարկայական դասաժամերին-9 ժամ
7. Գնահատում- 8 ժամ
8. Պլանավորում- 19 ժամ
9. Մասնագիտական զարգացում-8 ժամ
10. Ավարտական հետազոտական աշխատանքներ-18 ժամ:

Դասերը իրականացվել են 3 խմբերով՝ առկա և հեռավար ձևերով, յուրաքանչյուրի խմբի համար 110 ժամ տևողությամբ:

ԵՊՀ ԻՄ-ում վերապատրաստվել են Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի 75 ուսուցիչներ (54 դպրոցից), ովքեր հաջողությամբ ավարտել են վերապատրաստման դասընթացները և ստացել համապատասխան կրեդիտներ:

Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների համար վերապատրաստումներ իրականացրել են թվով 14 դասընթացավարներ, որոնցից 9-ը՝ ԵՊՀ ԻՄ-ի դասախոսներն են:

դ. ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. ԵՊՀ ԻՄ 2022-26 զարգացման ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի շրջանակում համակարգել ենք առաջին նպատակի՝ «Բարձրորակ կրթություն», պատրաստման աշխատանքները, որոնց շրջանակում յուրաքանչյուր շաբաթ ունեցել ենք հանդիպում հանձնաժողովի անդամների հետ: Մասնակցել ենք նաև մյուս երկու խնդիրների ձևակերպման և կազմման աշխատանքներին:
2. Համակարգել ենք ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի աշխատանքները: 2021թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում 5 նիստ ենք ունեցել, որտեղ քննարկվել և հավանության են արժանացել հետևյալ փաստաթղթերը՝ «ԵՊՀ ԻՄ Գիտական խորհրդին կից Որակի կառավարման

մշտական հանձնաժողովի գործունեության կանոնակարգը», «ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումներում գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի լիազոր-ներկայացուցչի գործունեության» կանոնակարգը, «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման» կարգը, «ԵՊՀ ԻՄ փաստաթղթաշրջանառության» կարգը, «ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ղեկավարների գործունեության» կարգը, ԵՊՀ ԻՄ 2022-2026 զարգացման ռազմավարական ծրագիրը, «ԵՊՀ ԻՄ ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման», կարգը, «ԵՊՀ ԻՄ վարչական, ինժենատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման» կարգը, «ԵՊՀ ԻՄ ներքին աուդիտի անցկացման» կարգը, «Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջները», «ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների ընդհանրական կոմպետեցիաների պարտադիր կազմը», «ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի մոնիթորինգի հանրագումարային զեկույցը», «ԵՊՀ հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կառավարման գործընթացում ուսանողների և դասախոսների մասնակցությունը երաշխավորող քաղաքականությունը»:

3. Համակարգել ենք ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ղեկավարների աշխատանքները, պարբերաբար կազմակերպել ենք հանդիպումներ, տրամադրվել են համապատասխան խորհրդատվություն:
4. Համակարգել ենք ԵՊՀ ԻՄ-ի կրթական ծրագրերի մոնիթորինգի նպատակով ձևավորված աշխատանքային խմբերի աշխատանքները՝ խորհրդատվություններ, հանդիպումներ: Համաձայն «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման» կարգի և ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի «ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի մոնիթորինգի նպատակով աշխատանքային խմբեր ստեղծելու մասին» (144, § 5) հրամանի՝ Մասնաճյուղում ձևավորվել է 4 աշխատանքային խումբ: Յուրաքանչյուր ֆակուլտետից ընտրվել է 1-ական կրթական ծրագիր. Հումանիտար գիտությունների ֆակուլտետից՝ «Ռուսաց լեզու և գրականություն», Բնական գիտությունների ֆակուլտետից՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», Տնտեսագիտության ֆակուլտետից՝ «Ֆինանսեր», Կիրառական արվեստ ֆակուլտետից՝ «Դեկորատիվ կիրառական արվեստ» կրթական ծրագիրը: Համաձայն «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման» կարգի 2.3.1 և 2.3.2.՝ ձևավորվել են 7 - ական անդամներից բաղկացած խմբեր, որոնց մեջ ընդգրկված են կրթական ծրագրերի ղեկավարները, արտաքին և ներքին շահակիցներ, ֆակուլտետի որակի

կառավարման հանձնաժողովի լիազոր-ներկայացուցիչները: Խմբերը կարգով, նախատեսված ընթացակարգի համաձայն, աշխատել են 2021թ. հոկտեմբերից մինչև մարտի 10-ը ընկած ժամանակահատվածը, մոնիթորինգի հաշվետվությունները ներկայացրել համապատասխան ֆակուլտետի գիտական խորհուրդում, որից հետո դեկանները տվյալ հաշվետվությունները՝ համապատասխան եզրակացություններով ներկայացրել են Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժին: Նշենք, որ մեր բաժնի կողմից վերահսկվել և ուղղորդվել է մոնիթորինգի իրականացման ողջ ընթացքը՝ պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ աշխատանքային խմբերի հետ (երեք հանդիպում՝ 10.11.2021թ, 02.02.2022, 23.03.2022), տրվել են համապատասխան խորհրդատվություններ:

5. Համակարգել ենք 2021-2022 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակի հետազոտական բաղադրիչ պարունակող դասընթացներ վարող դասախոսների հետ տարվող աշխատանքները: Բաժինը հետևել է, որ հետազոտական աշխատանքների թեմաների ներկայացումը, հաստատումը, ուսանողներին տրամադրելը, աշխատանքները պատրաստումը ու գնահատումը իրականացվեն «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման» կարգին համապատասխան: Պարբերաբար կազմակերպվել են առցանց հանդիպում-քննարկումներ 2021-2022 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակի հետազոտական բաղադրիչ պարունակող դասընթացներ վարող դասախոսների հետ (սեպտեմբերի 17, նոյեմբերի 17, դեկտեմբերի 15, հունվարի 12, մարտի 10, ապրիլի 29,), որոնց ընթացքում քննարկվել են հետազոտական թեմաների ընտրության, աշխատանքների պատրաստման, դրանց ներկայացման և գնահատման չափանիշների վերաբերյալ դասախոսների մոտեցումները և իրականացված աշխատանքները:
6. Կազմակերպվել են առցանց հանդիպում -քննարկում ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի ղեկավարների հետ, որոնց ընթացքում քննարկվել են կրթական և առարկայական ծրագրերին, քննություններին, դասախոսներին ու ուսանողների վերաբերող մի շարք հարցեր:

ե.Կրթական ծրագրեր

2022թ. հունվարից մինչև հուլիսի 1-ը՝ ԿԲԴՎ բաժինը համակարգել է ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի 2022-2026 առկա ուսուցման թվով 12, 2022-2027թթ. հեռակա ուսուցման թվով 6

կրթական ծրագրերի և 2022-2024թթ. մագիստրատուրայի 1 կրթական ծրագրի վերանայման ընթացքը:

ԿԲԴՎ բաժնի կողմից հունվար-հունիսի ամիսների ընթացում վերահսկել են աշխատանքային խմբերի աշխատանքները, պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ կրթական ծրագրերի ղեկավարների հետ, տրվել է համապատասխան խորհրդատվություն:

Բաժնի կողմից բակալավրի առկա ուսուցման 11 կրթական ծրագրերը ստուգվել են առնվազն երկու անգամ, ծրագիր կային, որոնք նույնիսկ 4 անգամ: Բաժնի կողմից պատրաստվել են հեռակա ուսուցման թվով 6 կրթական ծրագրերը՝ «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Զբոսաշրջություն» և «Ֆինանսներ»: